ՀՀ Արմավիրի մարզի Բագարանի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ Բագարանի գյուղապետարանի գյուղապետի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Գլխավոր մասնագետ ծածկագիր /2.3-1/

Աշխատակազմի գլխավոր մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի բյուջեի նպատակային օգտագործումը:
Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, վճարման փաստաթղթերի կազմումը և ներկայացումը, մասնակցում է ֆինանսատնտեսագիտական գործի կազմակերպմանը:
Քարտուղարի հանձնարարությամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան մարմիններ ներկայացնելու համար կազմում է ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, կազմում և ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը:
Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
- Բարձրագույն կրթություն

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2015 թվականի օգոստոսի 28-ին ժամը 12:00-ին Բագարանի գյուղապետարանի շենքում:

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի §Բ¦ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակի հետ միասին:
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևե մեկով:
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
- արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը:
- մեկ լուսանկար 3×4 չափսի:
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:
Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների կողմից ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից Բագարանի գյուղապետարանում /հեռ.093-12-66-08/, Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն /հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237 - 2- 76 -49, 0237-2-07-70/:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015թ.-ի օգոստոսի 8-ը: